Արձանագրություն N 2

**ԵՊՀ-ԳՀԾՁԲ-18/28 ծածկագրով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետով՝գնանշման հարցմամբ ԵՊՀ-ի շինարարական աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի մշակման, կազմման և փորձաքննության ծառայության մատուցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան
07.03.2018թ. ժ. 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղարիբյան
Անդամներ՝ Ա. Մկրտչյան, Ա. Աղուզումցյան, Կ. Մկրտչյան, Մ. Ավագյան
Քարտուղար՝ Ա. Մակարյան

**Հայտերի բացման մասին**

---------------------------------------------------------------------------------------------------------------

Հանձնաժողովի նախագահ `Ա. Ղարիբյան

1. Ընդունել ի գիտություն, որ՝
1.1 Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝
1.2

| Հ/Հ | Մասնակիցների տվյալները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | «Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ Ք. Սևան, Բաբաջանյան փ.1, բն.38 vvproject@yandex.ru | «Էներգացան ցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ, Ք. Երևան, Արմենակյան 129 | «Գամշին» ՍՊԸ Գեղարքունիքի մ., ք. Սևան, Բաբաջանյան 1 Ոստան, Թեհլերյան | <<Սեյսմշին>> ՍՊԸ Ք, Արտաշատ, Օգոստոսի 23, փ. 23, 21/3ա marketing@seismshin.am | <<Արխի էվրիկա>> ՍՊԸ Ք. Երևան, Մաշտոցի պ. 49/14 archievrika@mail.ru | <<Գլոբալ Ինժեներ>> ՍՊԸ Ք. Գավառ, Բոշնաղյան 1, նրբ. 8 globalengineerllc@gmail. | <<Վանարխ>> ՍՊԸ Ք. Վանաձոր, Տաթևի 14 vanarkh@mail.ru | Նախահաշվային գին |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 14 Gamshin-ltd@rambler.ru | | | com | | |
| | գնային առաջարկները (ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի) | | | | | | | |
| 1 | 580000 | 800000 | 2750000 | ***85000*** | 1400000 | 855000 | 850000 | 4500000 |

1.3 մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

1.4. հանձնաժողովը որոշեց «Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ-ի, «Էներգացանցնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի, <<Սեյմշին>> ՍՊԸ-ի, <<Գլոբալ Ինժեներ>> ՍՊԸ-ի, <<Վանարխ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը մերժել, քանի որ գնային առաջարկները ներկայացվել են սահմանված կարգի խախտմամբ, մասնավորապես խախտվել է ՀՀ Քաղաքաշինության նախարարի կողմից 15.02.2008թ. № 19-Ն հրամանը, որով հաստատվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթի (այսուհետ՝ Կարգի) կիրառումը, որը տարածվում է ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Շինարարության ոլորտում գնագոյացման նորմերի և նորմատիվների կիրառումն ապահովելու մասին» թիվ 1484-Ն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության սուբյեկտների և/կամ մասնակիցների (այդ թվում՝ կառուցապատողների, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների, շինարարություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողների) վրա: Որտեղ 2-րդ գլխի (Ծրագրերի քաղաքաշինական փաստաթղտերի մշակման արժեքը) 8-րդ բաժնի (Լրացուցիչ աշխատանքների և ծառայությունների արժեքի որոշման) 58 կետի 5-րդ մասում գրված է, որ շինարարության ընդհանուր նախահաշվային արժեքի որոշումը պետք է կատարվի հաշվի առնելով, որ նախագծային արժեքի վերջնական ֆինանսական հաշվեկշռի կազմումը, կատարողական գծագրերի և օբյեկտի շահագործման փաստաթղթերի կազմումը պետք է կազմի նախագծային արժեքի 10 - 15%-ը:

‘ԵՊՀ’ Հիմնադրամի *ԵՊՀ-ԳՀԾՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի* ժամանակ առանց արտաքին պատերի երեսապատման աշխատանքների նախատեսված է եղել կազմել մոտավորապես 1400 $մ^2$ մակերեսով շինարարական աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի մշակմանը, որը մոտավոր ծավալներով տեղադրված է եղել հրավերի մեջ:

‘ԵՊՀ’ Հիմնադրամը որպես օբեկտի ցանկ ըստ բարդության կարգի հանդիսանում է 5-րդ կարգի և հետևաբար «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ»-ի Հավելված Բ-ի նախագծային աշխատանքների արժեքը՝ օբյեկտի բարդության կարգի համապատասխան 1$մ^2$ համար 1000-ից մինչև 2000 $մ^2$ կազմում է 8000 ՀՀ դրամ: Մեր դեպքում դա կլինի.

8000 x 1400 = 11 200 000 ՀՀ դրամ,

որի 10 - 15%-ը կազմում է 1 120 000 – 1 680 000 ՀՀ դրամ:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Արխի Էվրիկա >> ՍՊԸ-ին:

- ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան կատարել հարցում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև իրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

1.4 Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ ............ Ա. Ղարիբյան

Անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ ............ Ա.Մկրտչյան

............ Ա. Աղուզումցյան

Անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ ............ Կ. Մկրտչյան

............ Մ.Ավագյան

Քարտուղար՝ ............ Ա. Մակարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 07 մարտի 2018թ.

ԵՊՀ-ԳՀԾՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման եղանակով ԵՊՀ-ի շինարարական աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի մշակման, կազմման և փորձաքննության ծառայության գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Ղարիբյանս և անդամներ Ա. Մկրտչյանս, Ա. Աղուզումցյանս, Կ. Մկրտչյանս, Մ. Ավագյանս և քարտուղար՝ Ա. Մակարյանս, նշված ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկների բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ | | Ա. Ղարիբյան |
| Անդամներ (ԳՊ/ԳԱ)՝ | | Ա.Մկրտչյան |
| | | Ա. Աղուզումցյան |
| Անդամներ (ԳՊ/ԲԱ)՝ | | Կ. Մկրտչյան |
| | | Մ.Ավագյան |
| Քարտուղար՝ | | Ա. Մակարյան |